

ԿԱՐԻՆԵ ԱՂԱԲԵԿՅԱՆ

ՇԱՆԹԻ  
ՍԱՆՁԱՅԱՐՈՒՄԸ



Գ Ի Տ Ա Ն Ք

Երևան 2009

Կարինե Աղաբեկյանը ճանաչված արձակագիր է: Նրա գրչին են պատկանում նաև «Սիրո հասունացումը», «Սիրո վերադարձը», «Կնոջ մենամարտը», «Սիրո կանչը», «Զգացմունքների ներդաշնակություն», «Սեր և արժանապատվություն», «Կզան բազում արշալույսներ», «Սիրո ուսուցիչը» և «Սիրո ծուղակ» վիպակները, որոնք նշանավորեցին հայ սիրավեպի սկզբնավորումը և մեծ հետաքրքրություն առաջացրին ընթերցողների շրջանում:

Աղաբեկյան, Կ.

Շանթի սանձահարումը: - Եր.: Գիտանք, - 144 էջ.

Շանթ Մելիքյանի գաղտնի կիրքը իր քարտուղարուհու հանդեպ ավելի ուժգին բռնկվեց, երբ նա հայտնաբերեց, որ Շաղիկը վաղուց է կորցրել ամուսնուն:

Եվ ահա մեկ խելահեղ գիշերը՝ անցկացրած գեղատեսիլ Ջերմուկի հյուրանոցի շքեղ համարում, շեշտակի փոխեց երկուսի կյանքը...

**ISBN 978-9939-810-04-1**

© Կարինե Աղաբեկյան, 2009

Այս գրքի բոլոր հերոսներն ու իրադարձությունները հորինված են, ամեն համընկնումը՝ պատահականություն:

- Վարդանյան, հուսով եմ՝ նորից չես փորձում վզիս փաթաթել հերթական անուղեղ թեթևալիկին, որի համար եղունգի լաքի գույնն ավելի կարևոր է, քան աշխատանքը:

- Պարոն՝ Մելիքյան...

- Երեկ քեզ հստակ շարադրեցի, թե ինչ պահանջներ ունեն քարտուղարուհու թեկնածության վերաբերյալ, ու այլևս բան չունեն ավելացնելու: Պետք է լինի միջին տարիքի... Ոչ մի ջինս... Փեշը ծնկից ցած... Համակարգչի անթերի իմացությանը: Հասկանալի՞ է:

- Բայց, պարոն՝ Մելիքյան...

Շաղիկը կանգնած էր գրասենյակի դռան առջև, որտեղ տեղի էր ունենում այս ուշագրավ խոսակցությունը: Կես թույն առաջ նրան այստեղ թողեց Վարդանյանը և խնդրեց մի քիչ սպասել: Շաղիկին մի ծուռ ժպիտ հղելուց հետո արագ սահեց ներս՝ *Շանթշին* ընկերության նախագահի ու տնօրենի գրասենյակ, և ջանաց դուռը ամուր ծածկել հետևից: Սակայն դուռը մի քիչ բաց մնաց՝ փոքրիկ ճեղք թողնելով: Մելիքյանի խոսքերը, որոնք անհնար էր չլսել, խորապես զարմացրին Շաղիկին:

- Այս անգամ ուրիշ գործակալությո՞ւն ես դիմել, - հարցրեց տղամարդու եռանդուն ձայնը:

- Այո՛, պարոն՝ Մելիքյան: - Շաղիկը պատկերացրեց Վարդանյանի նիհար, մտահոգությունից գունատված դեմքը: - Իհարկե: Թույլ տվեք ձեզ հավաստիացնել, այդ թեկնածուն շատ արժանիքներ ունի: Հըմ... միայն մի բան կա, ինչը այնքան էլ չի համապատասխանում...

- Ի՞նչ ես ուզում ասել:

- Համոզված եմ՝ գործնական առումով նա լիովին համա-

պատասխանում է ձեր պահանջներին, բայց...

Վարդանյանն ակնհայտորեն նյարդային վիճակում էր: Նրա հավաստիացումները Շաղիկին անհամոզիչ թվացին, և պարոն Մելիքյանն ըստ երևույթին նույն կարծիքի էր:

- Երևի երկարածամ ծիտ է, չէ՞, - ծաղրանքով նետեց Մելիքյանը: - Հասկացի՛ր, դեռ մի քանի ամիս կա, որ Մարիամը վերադառնա մայրության արձակուրդից: Իսկ այստեղ արդեն եղել են երկու օրիորդներ, որոնց ավելի հետաքրքրում էր, թե ես ինչքան փող ունեմ, քան աշխատանքը, որի համար նրանց վարձել էի: Ես դեմ չեմ կարծափեչ աղջիկներին, որոնց դուր է գալիս սիրաբանել: Բայց ոչ իմ գրասենյակում: Ուրիշ տեղում և ոչ աշխատանքի ժամանակ: Վստա՞հ ես, որ քո թեկնածուն այդպիսին չէ:

Բավական է... Շաղիկը դուռը հրեց ու մտավ ընդարձակ գրասենյակ: Նույնիսկ իրեն նեղություն չտվեց մտածելու, թե ինչ է ասելու գրասենյակի տիրոջը:

- Ներեցեք, պարոնա՛յք, որ ընդհատեցի, - ասաց սառնավուն ձայնով և քամահրալի հայացքով ընդգրկեց լուսամուտի առաջ կանգնած տղամարդկանց: - Ես ականա լսեցի ձեր խոսակցությունը և կարծում եմ՝ այստեղ մնալս այլևս անիմաստ է: Ուստի և հեռանում եմ... Ձեզ հաճելի օր եմ ցանկանում, պարոն Մելիքյան, - արտաբերեց հեզմախառն քաղաքավարությանը և շրջվեց, որ հեռանա:

- Տեղից չչարժվե՛ք, - հնչեց նախագահի վճռական ձայնը:

- Ինչ ասացի՞ք:

Շաղիկը նայեց ուղիղ տղամարդու աչքերին՝ խաժ և սառը: Նա իրեն աններելի կերպով կոպիտ պահեց: *Եթե պարոն Մելիքյանը կարծում է, թե ես սողալու եմ իր առաջ, ապա սխալվում է և շատ շուտով ստիպված կլինի համոզվել դրանում:*

- Ձեզ ո՞վ թույլ տվեց առանց հրավերի ներխուժել իմ գրա-

սենյակ, - մռնչաց նախագահը:

Շաղիկը հիշեց, թե նա ինչպիսի արհամարհանքով արտաբերեց «երկարածամ ծիտ» բառերը: Հա՛, երկարածամ է, հետո՞ ինչ: Նա մտադիր չէր զիջել այդ կնաստյաց անտաշին:

- Դա պարզապես ծիծաղելի է, պարո՛ն Մելիքյան: - Շաղիկը մտովի գովեց իրեն, որ հագին իր ամենալավ երկնագույն զգեստն է, այլ ոչ թե սովորական վերնաշապիկն ու նեղ շրջազգեստը: - Ես չէի պատրաստվում ներխուժել գրասենյակ. դուք դա հիանալի գիտեք: Ես կանգնած էի դռան հետևում, որտեղ ինձ թողել էր պարոն Վարդանյանը, և այդ դուռը կիսաբաց էր: Այնպես որ ձեր ամեն մի խոսքը լավ լսելի էր: Հաշվի առնելով այն, որ ես բավարարում եմ միայն ձեր մեկ պահանջին, որոշեցի, որ այլևս չարժե սպասել:

- Հատկապես ո՞ր պահանջին, - հարցրեց նախագահը սառնաշունչ ձայնով:

- Համակարգչի իմացությունը և մուտքագրելու արագությունը, կարծում եմ, կբավարարեն ձեզ: Ինչ վերաբերում է մնացյալին, ապա, ինչպես տեսնում եք, ես երկարածամ եմ, քսանյոթ տարեկան, իսկ փեշիս երկարությունը, - Շաղիկը հայացքով ցույց տվեց ոտքերը, որոնք ծածկված էին գրեթե մինչև կոճերը, - ակնհայտորեն շատ ավելին է, քան պետք է:

Վերջին բառերն ասվեցին ամենայն լրջությամբ:

- Իրոք...

Պարոն Մելիքյանի հայացքն արագ սահեց Շաղիկի կազմվածքով՝ մի պահ կանգ առնելով սև թափանցիկ գուլպաներով նուրբ ոտքերի վրա:

- Այո՛, իսկապես:

- Հաջողություն ձեզ, պարո՛ն Մելիքյան:

Շաղիկը պատրաստվում էր գնալ, բայց ահա նորից հնչեց նախագահի սառը ձայնը.

- Այստեղ ես եմ վարձում ու ազատում մարդկանց: Դուք եկել եք հարցազրույց անցնելու և պետք է հասկանաք, որ ես չեմ կարող զուր ժամանակ վատնել: Նստեք, օրիորդ...

- Տիկին... տիկին Անանյան, իսկ անունս Շաղիկ է, - հայտնեց առանց հապաղելու՝ ջանալով, որ ձայնը հնարավորինս պաշտոնապես հնչի:

- Դուք ամուսնացա՞ծ եք:

Նրա դեմքի արտահայտությունից Շաղիկը հասկացավ, որ նախագահը, չնայած իր հանդուգն պատասխաններին, մի տեսակ թեթևություն զգաց:

*Հապա ինչի՞նչ էր սպասում, գրողը տանի: Որ բավական է ինձ ժպտա, սեղանի վրայով կթռչեմ ու գի՞րկը կընկնեմ: Այդ մարդն անկասկած մեծ կարծիք ունի իր մասին:*

- Այո՛, բայց ինձ թվում է...

- Նստեք խնդրեմ, տիկին Անանյան:

Նախագահի կերպարանափոխումն անսպասելի էր ու զարմանալի: Վայրկենապես նա վերածվեց քարտուղարի համար կատարյալ մի պետի. ժպտում էր, դարձավ բարեհամբույր, մի խոսքով՝ իսկը սիրալիրություն էր ու բարյացակամություն:

- Ըստ երևույթին մեր խոսակցությունը հենց սկզբից սխալ ընթացավ, բայց դա իմ մեղքով էր, - շարունակեց նախագահը:

*Հմայիչ ժպիտ ունի, մտովի նշեց Շաղիկը՝ նստելով ընդարձակ, հարմար աթոռին, որը դրված էր կաղնեփայտե հոյակապ աշխատասեղանի դիմաց: Իսկ պարոն Վարդանյանը շարունակում էր մտահոգ տեսքով պտույտ գալ պետի շուրջը: Նրա աչքերը Շաղիկին աղերսում էին իրեն խոհեմաբար պահել:*

- Եկեք մոռանանք այս տիպի միջադեպը և ամեն ինչ սկսենք սկզբից, - առաջարկեց պարոն Մելիքյանը...

Ճանապարհորդությունն անցնում էր լարված լռության մեջ: Շանթը, մտքերի մեջ խորասուզված, նույնիսկ չէր նայում նրա կողմը, իսկ Շաղիկը զբաղված էր ինքնակեղեքումով:

Այդ համբույրը խորապես ցնցել էր նրան և ստիպել վերանայել իր բոլոր պատկերացումները կնոջ և տղամարդու հարաբերությունների մասին: Արդյո՞ք որպես տղամարդ՝ Ռազմիկն ընդհանրապես ձգել էր նրան: Շաղիկը հիշեց առաջին ամուսնական գիշերը, իրենց անճարակ շարժումները, և դեմքը բռնկվեց: Ընտանեկան կյանքի այդ կողմը սկզբում նրան բնավ դուր չէր գալիս: Սակայն պարզվեց, որ Ռազմիկը քնքուշ է և անպահանջկոտ: Բացի այդ, իրենց սեռահարաբերությունները հաճախ չէին լինում: Գուցե և այդ պատճառով դրանք մի կերպ տանելի էին: Սեռազգայական առումով Ռազմիկը երբեք նրան չէր հուզել: Ավա՛ղ, ճշմարտությունից չես փախչի...

Շաղիկը ստիպված էր ինքնախոստովանել, որ իր ամուսնությունը Ռազմիկի հետ ամենևին կատարյալ չէր: *Ներիր ինձ, Ռազմիկ՛...*

Նա տարակա հայացքը հառել էր լուսամուտի այն կողմից սլացող աշնանային բնապատկերին, ապա աչքերը փակեց՝ սոսկալի դատարկություն զգալով ներսում:

*Բայց չէ որ սիրո՞ւմ էի նրան: Դա ճիշտ է... Ռազմիկը քնքուշ էր, բարի: Նա իմ պաշտպանն էր: Ավելի մտերիմ, քան ավագ եղբայրը: Ես ասես նրա կրտսեր քույրը լինեի: Ինձ երես էր տալիս, պաշտպանում այն ամենից, ինչ կարող էր ցավ պատճառել:*

Այո՛, անկեղծորեն սիրում էին միմյանց... Բայց իրենց զգացմունքներում պակասում էր կարևոր բաղադրիչ մի մաս: Դա կարելի է անվանել, ինչ որ ցանկանաս. սեռազգայական հա-

կում, ցանկություն, տարփանք... Իրենց հարաբերություններում այդ բանը չկար: Եվ Շաղիկը նույնիսկ չէր կասկածում, որ գոյություն ունեն այդպիսի զգացմունքներ, քանի դեռ... քանի դեռ իր կյանքում չէր հայտնվել խաժ աչքերով ու սառցապատ սրտով այս տղամարդը, որ հիմա նստած է կողքին: Այդ զգացմունքը այժմ ծանոթ է իրեն, թեև նա շատ կցանկանար չիմանալ. չէ որ դա իրեն չափազանց անպաշտպան է դարձնում...

- Անդո՛ր, այստեղ կանգ առ, - հնչեց Շանթի ծայրը:

Շաղիկը ցնցվեց և իրականություն վերադարձավ: Մեքենան կանգ էր առել Եղեգնաձորի մոտակայքի ճամփեզրի փոքրիկ շուկայի մոտ: Նրանք դուրս եկան տնական գինի ու դավուրմա համտեսելու և մի քիչ քայլելու:

Կարմիր գինին հիանալի ներգործություն ունեցավ. վերացրեց Շաղիկի լարվածությունը, հետն էլ բթացրեց հոգեկան տվայտանքները:

*Է՛հ, ինչ լիճում է, թող լիճի, մտածեց մի տեսակ անհոգ հանդգնությամբ: Չորս տարի ողբացել եմ Ռազմիկի մահը: Յերիք է... հո միանձնուհի չե՞մ դառնալու: Այն, ինչ նա ապրեց Շանթի գրկում, անմոռանալի էր: Շաղիկը և՛ նախատում էր իրեն, և՛ տենչում նորից ու նորից զգալ կրքի այդ փոթորիկը:*